



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Զերմուկ

18/ՀՈՒԼԻՍԻ/ 2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028թթ. «ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ  
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ» ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Սույն թվականի հուլիսի 18-ին, ժամը 15:00-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Զերմուկի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկի նիստերի դահլիճում կայացավ ՀՀ Վայոց ձորի մարզի Զերմուկ համայնքի 2026-2028թթ. «Միջնաժամկետ ծախսերի ծրագրի» նախագծի վերաբերյալ հանրային քննարկումը:

Մասնակցում էին՝

Զերմուկ համայնքի ենթակայությամբ գործող «Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ հաճախող երիտասարդները, աշխատակիցները.

Զերմուկ համայնքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նախագծի վերաբերյալ հանգամանալից տեղեկատվություն ներկայացրեց Զերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Արմինե Ղազարյանը: Վերջինս նշեց ծրագրի՝ բավականին մեծ ու թիմային աշխատանք լինելու մասին, և որ վերջինի մշակման վրա աշխատել է ողջ աշխատակազմը, պատասխանատու կազմակերպությունների աշխատակազմերը: Նշվեց, որ ծրագիրը իր մեջ ընդգրկում է համայնքի ենթակառուցվածքային երեք տարվա միջնաժամկետ ծախսային ծրագրերը և ենթադրում է առաջիկա երեք տարիների եկամուտների և ծախսերի կանխատեսում: Այնուհետև նշվեց, որ ֆինանսական բաժինը տարվա ընթացքում ներկայացնում է չորս ֆինանսական ծրագիր, դրանք են՝

- Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր, որը հաստատվում է մեկ անգամ հինգ տարին մեկ ժամանակահատվածում՝ համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց անմիջապես հետո:
- Միջնաժամկետ ծախսերի ծրագիր՝ որը մշակվում է ամեն տարի և հաստատվում է հաջորդող երեք տարիների համար:



- Տարեկան աշխատանքային պլան՝ տվյալ բյուջետային տարվա համար:
- Ծրագրային բյուջե՝ դարձյալ ընթացիկ տարվա համար:

Հնգամյա զարգացման ծրագրում և ՏԱՊ-ում այն ծրագրերն են ներառված, որոնք իրականացվում են ինչպես պետական ու համայնքային բյուջեների հաշվին, այնպես էլ այլ կազմակերպությունների համաֆինանսավորմամբ, իսկ միջնաժամկետ ծախսերի մեջ մտնում են այն ծրագրերը, որոնք իրականացվում են համայնքի և պետական բյուջեների միջոցների հաշվին:

Խոսվեց բյուջեի եկամուտների և ծախսերի մասին՝ նշվեց որ բյուջեն պետք է լինի հաշվեկշռված, այսինքն երբեք համայնքի բյուջեի եկամուտից ավել ծախս չպետք է լինի, եթե ծախսը շատ է լինում բյուջեն դառնում է դիֆիցիտ, իսկ եթե եկամուտը ավել է լինում ծախսերից դա կոչվում է հավելուրդ:

Նշվեց, որ օրենքում փոփոխություն է եղել, և հնգամյա զարգացման ծրագիրը վերանվանվել է ռազմավարական ծրագիր՝ 2026թվականից սկսելու է նոր ռազմավարական ծրագրի մշակումը 2027-2031 տարիների համար և իհարկե ակնկալվում է բնակչության ակտիվ մասնակցությունը:

Վարող՝



Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի  
ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման  
և հավաքագրման բաժնի պետ՝ Արմինե Ղազարյան

Արձանագրող՝



Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի  
գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյան